ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀԲՄ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 01-ը օգոստոսի 2018թ.
ժամը 11^{00}

Մասնակցում էին՝

Գնահատողներ՝

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ), ՀՀ ՊՆ տեղակալի 13.07.2018թ. 397/ԴՎԱ հրաման:

ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչության պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,

ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պարենային, դեղամիջոցներով և բժշկական սարքավորումներով ապահովման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Տ. Հարոյան,

ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Ս. Նիկոլյան,

Բացակայում է ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյանը:

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀԾ 2-րդ դասի խորհրդական Գ. Տերյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/5» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ.Տերյան)

1. «Բիզնես Թրենդ» ՍՊԸ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը, մասնավորապես հայտը ներկայացնելու տարվան նախորդող 3 հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի գնային առաջարկից պակաս լինելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

«Բիզնես Թրենդ» «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը, մասնավորապես հայտը ներկայացնելու տարվան նախորդող 3 հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարի գնային առաջարկից պակաս լինելու մասին

(Գ.Տերյան)

1.1 Քանի որ գնահատող հանձնաժողովը «Բիզնես Թրենդ» ՍՊԸ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշը գնահատելիս վրիպել է՝ «Բիզնես Թրենդ» ՍՊԸ հայտը ներկայացնելու տարվան նախորդող 3 հաշվետու տարիների համախառն եկամտի հանրագումարը պակաս է գնային առաջարկից, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ մեկ աշխատանքային օրով կասեցրել է պայմանագրի կնքման գործընթացը՝ 01.08.2018թ. որոշել է ծանուցել մասնակցին անհամապատասխանության շտկման վերաբերյալ: Սահմանված ժամկետում մասնակիցը շտկել է անհամապատասխանությունը, ներկայացնելով ՀՀ ՊԵԿ 01.08.2018թ.թիվ 2061 տեղեկանքը, համաձայն որի «Բիզնես Թրենդ» ՍՊԸ հավետու 3 տարիների համախառն եկամտի հանրագումարը կազմում է 139 547 769 ՀՀ դրամ: ՈՒստի 02.08.2018թ. գնահատող հանձնաժողովը որոշեց «Բիզնես Թրենդ» ՍՊԸ որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/5» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարած ընտրված/հաղթող/ մասնակից և վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնելու որոշումը թողնել անփոփոխ:

1.2 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը միայն 4-րդ չափաբաժնի մասով և հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Տերյան)

Հանձնաժողովը որոշեց հայտարարել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԱՊՁԲ-7/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքները և հաստատել կնքվելիք պայմանագրի մասին հայտարարության տեքստը: Հանձնաժողովի նիստը հրավիրել գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11:00-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ա. Մարգարյան

Գնահատող Տ. Հարոյան

Գնահատող Ս. Նիկոլյան

Գնումները համակարգող՝ Գ. Տերյան